ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ-Ի ՈՒՂԻՆԵՐԸ

ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

Ձմեռ
2008
N 2

«Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» Հռոմեացիներ 5:5

Սիրելի բարեկամ

«Հուսո Ճանապարհ» հասարակական կազմակերպությունը թևակոխեց իր գործունեության երրորդ տարին: Նախորդ երկու տարիներում իրականացված ծրագրերի ընթացքում բազում պատանիներ և երիտասարդներ ընդգրկվեցին «Հուսո ճանապարհ»-ի շարքերում: Նրանց շնորհիվ այսօր արդեն մեր ծրագրերի թիվն աճում է:

2007թ. աշնանը երկու նոր ծրագրեր ստեղծվեցին պատանիների և երիտասարդների համար: Թեև «Հուսո ճանապարհը» հիմնականում ծրագրեր է իրականացնում պատանիների և երիտասարդների շրջանում, սակայն 2008 թ. այս շրջանակը կընդլայնվի:

Հատկապես ուրախալի է այն փաստը, որ 2008 թվականի գարնանը նախատեսվում է ծրագիր անցկացնել նաև տարիքով հասուն (40 և ավելի) մարդկանց համար:

Եվ քանի որ մեր կազմակերպության անվանումը իր մեջ կրում է հույս բառը, ապա մենք հույս ունենք, որ Աստծո օգնությամբ այս տարին ևս կլինի օրհնաբեր և բարեհաջող:

Նարինե Սինանյան
երիտասարդական ծրագրերի պատասխանատու

Պատանեկան ծրագիր Մեծամոր քաղաքում: Աշուն 2007

Պատանեկան ծրագրեր
Աշուն 2007

Պատանեկան ծրագիր Ս. Սահակ-Մեսրոպ երիտասարդական կրթահամալիրում: Աշուն 2007

2007թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ջրաշենի թիվ 107 դպրոցում «Հուսո Ճանապարհը» կազմակերպեց պատանեկան ծրագիր, որի նպատակն էր ծանոթացնել պատանիներին հիմնական քրիստոնեական սկզբունքներին:

Երիտասարդական ծրագիր

2007 թվականի աշնանը հերթական «Ալֆա» ծրագիրը անցկացվեց Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդարանում:

Ծրագրի ընթացքում նաև երկօրյա սեմինար անցկացվեց Սևանում, որտեղ մասնակիցներից շատերը առաջին անգամ մասնակցեցին Սուրբ Պատարագին:

3-րդ «Ալֆա» ծրագիր
Հոկտեմբեր 2007

3-րդ «Ալֆա» ծրագրի սեմինար
Նոյեմբեր 2007

2-րդ սեմինար երիտասարդների համար, ովքեր դեռ ամուսնացած չեն
Դեկտեմբեր 2007

«Հոգու պտուղներ»

2007 թվականի նոյեմբեր ամսվանից «Հուսո Ճանապարհ»-ը նախաձեռնեց նոր դասընթաց, որը կրում է «Հոգու պտուղներ» անվանումը:

Հանդիպումների ընթացքում քննարկվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սերը, հավատարմությունը, ուրախությունը, խաղաղությունը, համբերությունը և այլն:

«Հոգու պտուղներ»
Դեկտեմբեր 2007

«Իսկ Հոգու պտուղն այս է՝ սեր, ինդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն.» Գաղատացիներ 5:22-23

2008թ. Մեր Զատիկ-Ամառ ծրագրերը

Փետրվար

3-ին Արարատյան թեմի Առաջնորդարանում կնշվի Բուն Բարեկենդանը:

5 -ից կվերսկսվի «Հոգու պտուղներ» դասընթացը:

23-ին առաջնորդների սեմինար «Հուսո Ճանապարհ» գրասենյակում:

Մարտ Կվերսկսվեն պատանեկան ծրագրերը Զրաշեն գյուղի թիվ 107 դպրոցում և Մեծամոր քաղաքում:
Երիտասարդական ծրագիր Արարատյան թեմի Առաջնորդարանում:
Նոր ծրագիր տարիքով հասուն մարդկանց համար:
Այցելություն Էջմիածնի գանձարան:

Ապրիլ Սեմինար երիտասարդ ընտանիքների համար Սևանում

Մայիս Սեմինար երիտասարդների համար

Հունիս Սեմինար պատանի մարզիկների համար

Հուլիս «Փարոս» ծրագիր

Ինչպե՞ս կարող ես օժանդակել մեր ծրագրերին:

- Եթե ընկերդ դժվարանում է մասնակցել ծրագրերին ֆինանսական պատճառով՝ վճարիր նրա փոխարեն
- աջակցիր հյուրասիրություններին, ինչով կարող ես...
- նվիրիր Աստվածաշունչ կամ այլ հոգևոր գրականություն
- եղիր կամավոր պատանեկան, երիտասարդական «Փարոս» ծրագրերում

ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

«Հուսո Ճանապարհ»
երիտասարդական կրթամշակութային հասարակական կազմակերպություն

www.wayofhope.am
Հեռ./ ֆաքս (+37410) 55 34 38
էլ. փոստ: staff@wayofhope.am
ՀՀ Երևան 0010
փոստարկղ 41
Զարենցի 28/6